ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻ

ՊՐԱՒՈՍԼԱՒ ԵԿԵՂԵՑԻ

(Церк. Вѣст.)

Պրաւոսլաւ Հոգեւ. Վարչութեան նախահաշիւը.

Պետական Դուման ընդունել է Ռուս Սրբազնագոյն Սինոդի նախահաշիւը 1911 թուի համար.

Սրբազնագոյն Սինոդի նախահաշիւը 37,000,567 ռ. է. համեմատութեամբ անցած տարուայ՝ 3,37100 ռուբլ. աւելի։ Դումայի ցանկութեան համեմատ եպիսկոպոսների ռոճկի հաւասարումն իրագործուել է, բարւոքուել է կոնսիստորիաների գործավարութեան եղանակը։ Սրբազնագոյն Սինոդի օրեր-պրոկուրորի զեկուցման մէջ շեշտուած են.

ա. Պրաւոսլաւ ծխի կանոնադրութիւնը.—Անցած տարուայ վերջին պրաւոսլաւ ծխի կանոնադրութեան ծրագիրը առաջարկուած է նախարարների խորհրդին. այդ ծրագրի հիմնական գաղափարն է, 1 ծխականներին հրաւիրել գործոն մասնակցութեան ծխական կեանքին՝ ծխական ժողովներով և ծխական խորհուրդներով. 2. հնարաւորութիւն է տրւում բարգաւաճելու ծխի կրթական, բարեգործական զանազան հաստատութիւններին։ 3. ինչպէս ծխական, նոյնպէս և պրաւոսլաւ եկեղեցական հաստատութիւնների զեկավարող դերը յանձնւում է քահանային, որ ծխականների հետ ըստ կանոնի, հնազանդում են թեմի եպիսկոպոսին։ 4. ծխի կազմակերպութեանը տրւում է հնարաւոր պարզութիւն և ճկունութիւն, որ ծրագրուած կանոնադրութիւնը ընդունելի լինի որպէս պարտաւորական ձև պրաւոսլաւ Ռուսիայի զանազան կողմերում ու անկիւններում։ 5. Ծխին օգնութիւն և աղբիւր է ցոյց տրւում շարժական և անշարժ ստացուածներ ձեռք բերելու, տալով նրան լիազօրութիւն իւր իրաւունքը դատարաններում պաշտպանելու, իրաւաբանական մարմնի բոլոր արտօնութիւններով։

բ. Կոնսիստորիաների գործավարութեան բարւոքման մանրամասնութիւնները։

Գ. Վանական գոյքերը կառավարելու կանոնները.—Այդ կանոնների նպատակն է բարձրել նիւթական և յատկապէս վանական կեանքի բարոյական կողմը. ամփոփելով վանականութեան վերաբերեալ բոլոր կանոնները ի մի, որ ցայսօր չի եղել։

Դ. Հոգևոր Վարչութեան ձեռնարկութիւնը։—Այդ ձեռնարկութեան նպատակն էր անցեալ տարի քաղաքային և գիւղական հոգևորականների կացութիւնը բարձրելու համար ծրագիր կազմել։ «Հաւանական է, ասուած է զեկուցման մէջ, որ 1912 թուի նախահաշիւ կազմելիս կից տեղեկագրում Պետական Դումայի ուշադրութեան կառաջարկուեն մշակուած նախագծի հիմնական գծերը, որին կը հետևի կարգը համապատասխան օրինագիծ պատրաստելու համար։ Հոգևոր Վարչութիւնը, յամենայն դէպս, պէտք է յիշի Պետական Դումայի և հետևեալ կազմի առաջ, որ այս հարցը գործադրելու պատիւը պատկանում է Պետական Դումայի երրորդ կազմին»։

Ե. Հոգևոր դպրոցների և սեմինարիաների համար նոր կանոն և կարգ մշակող Սինոդի ուսումնական յանձնաժողովի աշխատանքները։—Այդ աշխատանքները աւարտուել են տաւոյս յունվար ամսին և ուսումնական յանձնաժողովի բոլոր առաջարկութիւնները կը մատուցուեն Սրբազնագոյն Սինոդին։ Այդտեղ ուշադրութիւն է դարձուած դպրոցների նիւթական և ուսումնական հանգամանքների բարձրման վերայ նպատակայարմար դարձնելու համար։

Իբրև եզրակացութիւն իւր ճառի Ս. Սինոդի պ. օբեր—պրոկուրորը յոյս է յայտնել, որ «ապագայում էլ պետական Դումայի բարեացակամ վերաբերմունքի շնորհիւ հոգևոր վարչութեան բոլոր նոր ձեռնարկութիւնները, որոնք համապատասխանում են եկեղեցու և պետութեան իսկական կարիքներին ու օգտին, յաջող ելք կստանան օրէնսդրական գործողութեամբ. այդ ապացոյց կը լինի, որ Ռուս պրաւոսլաւ եկեղեցու կարիքները ժողովրդական ներկայացուցիչները իրանց սրտին այնպէս մօտ են ընդունում, ինչպէս և ինքն ռուս պրաւոսլաւ ժողովուրդն է»։

Հովիւների ընդհանուր կրթութիւն.

Церков. Вѣст.-(№ 9) *ասում է, որ նոյն ինքն հովիւների խոստովանութեամբ շատ քիչ է այն ընդհանուր կրթութիւնը, որ նրանք ստանում են սեմինարիաներում. Հոգևոր դպրոցներում պէտք է զօրացնել ընդհանուր կրթութիւնը, եւ իմաստութեամբ է վարւում հոգևոր վարչութիւնը աշխատելով ընդարձակել իւր դպրոցներում ոչ միայն աստուածաբանական այլ և հանրակրթական ծրագիրը.*

ՌՈՒՍ ՀԵՐՁՈՒԱԾՆԵՐ

Հռովմի ձգտումն ռուսալ հնածէսներին.

Պարբերական հոգևոր վարչութեանը մտահոգութիւն է պատճառում Հռովմի ձգտումն գրաւելու ռուս հնածէսներին. Հռովմը որսալով 2—3 հոգևորական հնածէսներ, կարծում է, թէ առատ հունձ կունենայ. Սակայն ըստ ռուս լրագրների, Հռովմի որսած հնածէսները մեծարժէք գիւտ չեն. Դրանք անհաստատ համոզմունքի տէր մարդիկ են, պատրաստ հանգամանքին նայելով փոխելու իրանց համոզմունքը. և դրանցով դատել հնածէսներին՝ սխալ կը լինէր.

Խօսելով դէպի Հռովմ ձգտող հնածէսների գլխաւոր Հ. Վոլոշչուկի մասին Церк. Вѣст.-*ը առնելով* Рус. Слово-*ից ասում է. կան երկու տեսակ կրօնի հետամուտներ. ոմանք իսկապէս անկեղծօրէն կրօնական բաւականութիւն են որոնում կրօնական նոր համայնքների մէջ, և յաճախ հոգեկան հանգիստ չգտնելով մի դաւանութեան մէջ, ուրիշ դաւանութեան են դիմում, որ իրանց հոգեկան հարցասիրութեան պատասխան գտնեն, կայ և մի ուրիշ ամբողջական տիպ, որին պատկանում է Հ. Վոլոշչուկը. Դրանք անապատում թափառողների նման են, որ ոչ թէ ճշմարտութիւն են որոնում, այլ արածելու տեղ, ուր աւելի յարմար պարզէին իրանց վրանները...*